



տանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշման NN 5 և 11 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից 2018 թվականին հատկացնել 182160.0 հազ. դրամ՝ բյուջետային ծախսերի «Այլ անհատույց հատկացումներ ֆիզիկական անձանց՝ բացառությամբ իրավաբանական անձանց միջոցով նշված գումարների հատկացման դեպքերի» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված միջոցները տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ 37 բնակավայրերի հողօգտագործողներին՝ փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համար որպես պետական աջակցություն:

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշման 3-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով աշնանացան հացահատիկային մշակաբույսերի փաստացի ցանված յուրաքանչյուր հեկտարի հաշվով 60000 դրամ անհատույց տրամադրել գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական անձանց՝ սեփականության կամ համայնքային հողերի վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի հիման վրա:

5. Յուրաքանչյուր հողօգտագործողի պետական աջակցությունը տրամադրել առավելագույնը 7 հեկտար հողատարածքի վրա կատարված փաստացի աշնանացանի համար:

6. Պետական աջակցության օբյեկտ չհամարել տնամերձ հողատարածքները:

7. Հաստատել փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համար պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

8. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ աջակցության համար նախատեսված գումարների տրամադրման նպատակով կնքել պայմանագիր «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության հետ:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 1  
Երևան



Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2018 թվականի  
սեպտեմբերի 14-ի N 1042 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման |       |     | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) |
|---|-------|-----|--|---|
| միավոր                                      | խումբ | նախ |  | տարի  |
|   |       |     | ԸՆԴՀԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ  | 0.00  |
|   |       |     | այդ թվում՝   |   |
| 04  |       |     | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  | (182,160.00)  |
|   |       |     | այդ թվում՝   |   |
|   | 02    |     | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն  | (182,160.00)  |
|   |       |     | այդ թվում՝   |   |
|   |       | 01  | Գյուղատնտեսություն   | (182,160.00)  |
|   |       |     | այդ թվում՝   |   |
|   |       |     | 15. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար  | (182,160.00)  |
|   |       |     | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն  |   |
|   |       |     | որից՝  |   |
|   |       |     | Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին  | (182,160.00)  |
| 11  |       |     | <u>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ</u>  | 182,160.00  |
|   |       |     | այդ թվում՝   |   |
|   | 01    |     | <u>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</u>   | 182,160.00  |
|   |       |     | այդ թվում՝   |   |
|   |       | 01  | <u>ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ</u>   | 182,160.00  |
|   |       |     | 01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ  | 182,160.00  |
|   |       |     | ՀՀ կառավարություն  | 182,160.00  |
|   |       |     | որից՝  |   |
|   |       |     | Այլ անհատույց հատկացումներ ֆիզիկական անձանց՝ բացառությամբ իրավաբանական անձանց միջոցով նշված գումարների հատկացման դեպքերի   | 182,160.00  |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ  
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.14 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

| Չափորոշիչներ  |      | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական նշանով, իսկ<br>նվազեցումները՝ փակագծերում) |         |                        |             |
|---|------|---|---------|------------------------|-------------|
|   |      | ոչ ֆինանսական ցուցանիշներ   |         | ֆինանսական ցուցանիշներ |             |
|   |      | ինն ամիս  | տարի    | ինն ամիս               | տարի        |
| <b>ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները</b> |      |   |         |                        |             |
| <b>1. Քաղաքականության միջոցառումներ</b>   |      |   |         |                        |             |
| <b>1.2. Տրանսֆերտներ</b>  |      |   |         |                        |             |
| <b>Ծրագրային դասիչը</b>   |      | <u>Մատուցվող ծառայության անվանումը</u>  |         |                        |             |
| 1022  | ԾՏ03 | Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար |         |                        |             |
|   |      | <u>Նկարագրությունը</u>  |         |                        |             |
|   |      | Հողօգտագործողներին մատչելի գներով ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի տրամադրում                   |         |                        |             |
| Շահառուների քանակը  |      | Համայնքների քանակը  |         |                        |             |
| Շահառուների քանակը  |      | Ծրագրից օգտվող տնտեսավարողների թիվը   |         |                        |             |
| Գումարը (հազ. դրամ)   |      | X   | X       |                        | (182,160.0) |
| Տրանսֆերտի վճարման հաճախականությունը (անգամ)  |      |   | 1 անգամ |                        |             |

|   |                            |   |      |  |           |
|---|----------------------------|---|------|--|-----------|
| <u>Շահառուների ընտրության չափանիշները</u>   |                            |   |      |  |           |
| Յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեով ընտրված մարզերի հողատերեր   |                            |   |      |  |           |
| <u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>   |                            |   |      |  |           |
| 1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր   |                            |   |      |  |           |
| <u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>  |                            |   |      |  |           |
| Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում, օգտագործվող վարելահողերի ավելացում՝ այն հասցնելով ամբողջ վարելահողերի շուրջ 82.7% |                            |   |      |  |           |
| <b>Ծրագրային դասիչը</b>   |                            | <u>Մատուցվող ծառայության անվանումը</u>  |      |  |           |
|   |                            | Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն                           |      |  |           |
| 1022  | ԾՏ12                       | <u>Նկարագրությունը</u>  |      |  |           |
|   |                            | Փաստացի կատարված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի համար պետական աջակցություն |      |  |           |
| Շահառուների քանակը  | Բնակավայրերի քանակը        |   | 37   |  | տարի      |
| Շահառուների քանակը  | Շահառուների քանակը (շուրջ) |   | 4000 |  |           |
| Գումարը (հազ. դրամ)   |                            | x   | X    |  | 182,160.0 |
| Տրանսֆերտի վճարման հաճախականությունը (անգամ)  |                            |   | 1    |  |           |
| <u>Շահառուների ընտրության չափանիշները</u>   |                            |   |      |  |           |
| Յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեով ընտրված մարզերի հողատերեր   |                            |   |      |  |           |
| <u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>   |                            |   |      |  |           |
| 1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր   |                            |   |      |  |           |
| <u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>  |                            |   |      |  |           |
| Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում, օգտագործվող վարելահողերի ավելացում՝ այն հասցնելով ամբողջ վարելահողերի շուրջ 82.7% |                            |   |      |  |           |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ  
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ  
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Բաժին 2 Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

| Ծրագրային դասիչը |             | Գործառական դասիչը    | Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը   | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են<br>դրական նշանով, իսկ<br>նվազեցումները՝ փակագծերում)<br>ՀՀ 2018 թ. պետական բյուջե<br>(հազ. դրամ) |
|------------------|-------------|----------------------|---|--|
| ծրագիրը          | միջոցառումը | (բաժինը/խումբը/դասը) |   |  |
| 1022             |             |                      | ԾՐԱԳԻՐ  |  |
|                  |             |                      | Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր  | -  |
|                  |             |                      | <u>Ծրագրի նկարագրությունը</u>   |  |
|                  |             |                      | Համայնքներում գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ,<br>վերամշակմամբ և ագրոտուրիզմով զբաղվող ֆիզիկական և<br>իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի, այդ թվում՝<br>լիզինգի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում |  |
|                  |             |                      | <u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>  |  |
|                  |             |                      | Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող<br>աննդամթերքի ծավալների ավելացում   |  |
|                  |             |                      | Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ   |  |
|                  | ԾՏ03        |                      | Պետական աջակցություն գյուղատնտեսական<br>հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի<br>ձեռքբերման համար   | (182,160.00)   |
|                  |             |                      | <u>Տրանսֆերտի նկարագրությունը</u>   |  |

|  |      |   |            |
|--|------|---|------------|
|  |      | Հողօգտագործողներին մատչելի գներով ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի տրամադրում |            |
|  |      | Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ   |            |
|  | ԾՏ12 | Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն                               | 182,160.00 |
|  |      | <u>Տրանսֆերտի նկարագրությունը</u>   |            |
|  |      | Փաստացի կատարված աշխատանքային հացահատիկային մշակաբույսերի համար պետական աջակցություն  |            |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ



Կ Ա Ր Գ

ՓԱՍՏԱՑԻ ՑԱՆՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ  
ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ 37 բնակավայրերի գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

II. ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրվում է համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ սույն կարգի ձևի տեղեկանքի հիման վրա:

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված տեղեկանքը համայնքի ղեկավարի կողմից համապատասխան մարզպետարան է ներկայացվում մինչև աջակցության տրամադրման տարվա նոյեմբերի 5-ը:

4. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված տեղեկանքը հաստատվում է համապատասխան մարզպետի կողմից և մինչև աջակցության տրամադրման տարվա նոյեմբերի 10-ը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

5. Պետական աջակցության գումարների տրամադրումից առաջ, մինչև պետական աջակցության տրամադրման տարվա նոյեմբերի 25-ը, Հայաստանի Հանրապետության

գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության ու համապատասխան մարզպետարանի կողմից ձևի տեղեկանքով ներկայացված հողօգտագործողների թվի 10 տոկոսի չափով իրականացվում է ընտրանքային մոնիթորինգ:

6. Համայնքի պետական աջակցություն ստացող գյուղատնտեսական հողօգտագործողների ընդհանուր թվի 5 տոկոսը գերազանցող թվով գյուղատնտեսական հողօգտագործողների կողմից փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի զբաղեցրած տարածքներից ավելի տարածքի մասին տեղեկատվություն ներկայացնելու փաստը հիմք է համայնքին պետական աջակցության գումար չտրամադրելու համար:

7. Մոնիթորինգի արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, ձևի տեղեկանքում համապատասխան մարզպետարանի կողմից կատարվում են ուղղումներ, և ուղղված ու մարզպետի կողմից հաստատված տարբերակը մինչև 2018 թվականի նոյեմբերի 28-ը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

8. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից 2018 թվականի դեկտեմբերի 3-ից ձևի տեղեկանքի հիման վրա իրականացվում են պետական աջակցության գումարների վճարումները՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը:

9. Համապատասխան մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմիններն ապահովում են պետական աջակցության գումարների տրամադրման կարգի և դրա իրականացման գործընթացների հանրային իրազեկումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Ձև  
Հաստատում եմ  
ՀՀ ----- մարզպետ  
-----  
----- 2018 թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

2018 թվականին ՀՀ \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի \_\_\_\_\_ բնակավայրի փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի (մինչև 7.0 հեկտար՝ բացառությամբ տնամերձի) համար հատկացվող աջակցության մասին

| NN<br>ը/կ | Հողօգտագործողի<br>անունը, ազգանունը, հայրանունը | Անձնագրի<br>տվյալները<br>(սերիան,<br>համարը,<br>տրված է) | Սեփականության<br>կամ վարձա-<br>կալության իրա-<br>վունքի վկա-<br>յականի<br>համարը | Աշնա-<br>նացան<br>ցորենը<br>(հեկտար) | Աշնա-<br>նացան<br>գարին<br>(հեկտար) | Ընդամենը՝ աշնա-<br>նացան հացահա-<br>տիկային մշակա-<br>բույսերի ցանքա-<br>տարածությունները<br>(հեկտար)<br>(4+5) = 6 | Նախատեսված<br>պետական<br>աջակցության<br>գումարը<br>(դրամ)<br>(6*60000 դրամ)=7 | Հողօգտա-<br>գործողի<br>ստորագ-<br>րությունը |
|-----------|---|--|--|--------------------------------------|-------------------------------------|--|---|---|
|           | 1   | 2  | 3  | 4                                    | 5                                   | 6  | 7   | 8   |
| 1.        |   |  |  |                                      |                                     |  |   |   |
| 2.        |   |  |  |                                      |                                     |  |   |   |
| 3.        |   |  |  |                                      |                                     |  |   |   |
| Ընդամենը  |   | X  |  |                                      |                                     |  | X   | X   |

Համայնքի ղեկավար

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(ազգանունը, անունը, հայրանունը)

Կ.Տ.

\_\_\_\_\_  
2018 թ.

